վանաց · յարեւելս և յարեւմուտս , յորոյ վերայ յարուցին վէճս Ցոյնք և Լատինք 'ի ժամանակի մերում։ Իսկ վասն Սիոնի՝ Տես Դեռ 'ի Գիրս Հանոյ Քրիստոսի · Երես 276։

بسم الله الرحمن الرحيم

امر بتطهير هذا المكان من المشركين وتنظيفه وعمله مسجد يذكر فيه
اسم الله سلطان الانام ناصر دين الاسلام وخادم البيت الحرام
منشى العدل والأمان السلطان بن السلطان السلطان سليمان بن عثمان
ابد الله الاسلام بحياته على يد مولانا شيخ الشيوخ المسمى محمد الواعظ
عجمى اجرى الله الخيرات على يديه ورحم والديه بتاريخ الخمس
من شهر ربيع الاول سنة ستة وثلاثين وسبعماية والحمد لله وحده

Հրամայեաց Սուլթան Սուլէյման որդի Օսմանայ գլխաւոր Շէյխի ուրումն , որում անունն էր քարոզիչ Մէհէմմէտ 'ի Պարսիկ ցեղէ , մաքրել և սրբել զտեղիս զայս 'ի քրիստոնէից , և կարգել 'ի մզկիթ , և անդ յիշել զանուն Աստուծոյ , 'ի թուին Հիճրէթի ۷۳۶ յամսեանն Ռէպիլ էվվէլի։

Յետ խօսելոյ մեր փոքր 'ի շատէ զվանաց Սիոնի , դարձցուք այժմ գրել զվէճս որ պատահեցաւ 'ի մէջ Հայոց և Յունաց։ Անհամաձայնութիւն Յունաց՝ էր 'ի վերայ երկուց խնդրոց · զի նոքա ստիպէին զՀայս 'ի միասին վճարել զհարկս և զտուգանս սպանութեանց , որք պատահէին 'ի սմին ժամանակի , եւ արկանէին 'ի վերայ վանօրէից · և 'ի Ճրագալուցի մեծի Պասեքի 'ի հանդիսի Լուսաւորութեան չմտանել Հայոց 'ի Գերեզմանն Քրիստոսի՝ նախ քան զՅոյնս։ Իսկ Հայք ընդդէմ սովորութեան համարեալ զայս ոչ առնուին յանձն , որոյ վասն բազմացան վէճք և խռովութիւնք 'ի մէջ երկուց ազգաց։ Այլ իբրեւ ոչ կարացին համաձայնիլ և իրաւախոհ լինիլ 'ի միջի իւրեանց · բողոք կալաւ Պատրիարքն Յունաց Գերմանոս առ Արքայն Սուլէյման և ամբաստան եղեւ զԱնդրիաս Պատրիարքէն Հայոց , և երկոքեանն իսկ չոքան 'ի Կոստանդինուպոլիս , և 'ի յանդիման լինիլ Մեծի կայսերական ատենին · սկիզբն կալաւ խօսիլ Գերմանոս և ասէ · Կայսերական հարին , զոր հատուցանեմք ամի ամի յԵրուսաղէմ · 'ի սկզբանէ անտի